Տիգրան՝ որդի Արտաշէսի՝ թագաւորեաց ամս ԻՐ։ Սա գնաց 'ի Միջերկրեայս 'ի պատերազմ, և ըմբռնեցաւ 'ի Յունաց. զոր եթող Լուկիանոս Պայսրն, և ետ նմա զԱռաքի աղգական իւր 'ի կնութեան։ Եւ իբրև եկն Տիգրան 'ի Հայս, եթող զկինն զայն, և 'ի նմանէ ծնեալ զորդիսն ընդ այլ Նախարարութիւնս՝ կացուցանէր, զի մի՛ անուանեսցին Արշակունիք։

Վաղարշ՝ որդի Տիգրանայ՝ ամս Ի։ Սա շինեաց զՎաղարշավան 'ի Բասէն, և պատէ պարսպաւ զՎարդգէս 'ի վերայ Բասախ գետոյն, և անուանեաց Վաղարշապատ. և 'ի պատերազմն Խազլաց և Բասլաց քաջապէս մեռաւ։

Խոսրով՝ որդի Վաղարշայ՝ ամս ԽԸ։ Սա զՀօրն մահուն պահանջելով զվրէժն՝ գնաց յաղթեաց Հիւսիսայնոցն. և ասպատակեալ 'ի Պարսս՝ զթագաւորն Արտաշիր՝ մինչև 'ի Հնդիկս փախոյց, և նշան կանգ-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան